ԽՍՀՄ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ

ՀՐԱՀԱՆԳ

ԶԻԵՐԻ ԶՈՒԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՊԵՏՀՐԱՏ 1938 ԵՐԵՎԱՆ

02 MAR 2018

ՀՐԱՀԱՆԳ

ՁԻԵՐԻ ԶՈՒԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

I. Ձիերի զուգավորման կամպանիան անցկացնելու նախապատրաստական աշխատանքը

1. Ձիերի վերարտադրման աշխատանքում հողային որգանները, կոլտնտեսությունները և խորհրդային տնտեսությունները պետք է անշեղորեն կատարեն Համկ (բ) Կ Կենտկոմի և ԽՍՀՄ ԺԿԽ-ի 1933 թվի փետրվարի 10-ի վորոշումը, վոր պարտադրում է զուգավորել սերունդ տալու համար պիտանի բոլոր զամբիկներին։

2. Յելնելով այդ հիմնական դրույթից յուրաքանչյուր կոլտնտեսությունում և խորհրդային տնտեսությունում մինչև զուգավորման կամպանիան սկսվելը պետք է կատարված լինի հետևյալ աշխատանքները։

ա) Շրջհողբաժնի նշանակած զոոանասնաբուժական հանձնաժողովի կողմից պետք է զննված լինեն 3 տարեկան ու դրանից մեծ հասակի բոլոր զամբիկները, ինչպես նաև այն յերիտասարդ զամբիկները, վորոնց 3 տարին լրանում է գարնանը, և պետք է առանձնացված լինեն սերունդ տալու համար պիտանիները։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ— Զուգավորման յենթակա չեն՝ յերեք տարեկանից ցածր զամբիկները, 3 տարեկան հասակի, բայց չկազմավորված և թերզարգացած զամբիկները, սեռական որգանների այնպիսի ախտաբանական փոփոխություններ ունեցող զամբիկները, վորոնց ժամանակ անհնարին է դառնում հղիությունն ու ծննդաբերությունը, հիվանդ կամ թե վարակիչ հիվանդությունների վերաբերյալ կասկածելի զամբիկները, վորոնց հիվանդությունների դեմ պայքարելու ժամանակ արգելվում է զուգավորումը կամ թե արհեստական սերմնավորումը (խլախտ, վարակիչ սակավարյունություն)։

ը) զամբիկների զննման հետ միաժամանակ կատարվում է նաև հովատակների զոոանասնաբուժական զննում։ Շրջանում յեղած հովատակներից լավագույններն առանձնացվում են զուգավորման կամպանիային մասնակցելու համար, մշակվում է շրջանում գործելիք զուգավորման կայանների ցանցը, կատարվում է հովատակների տեղաբաշխում ըստ կայանների և մայրերի կցումը դրանց։ Զուգավորման կայանների կազմակերպումը, հովատակների տեղաբաշխումը և զամբիկների կցումը դրանց՝ պետք է շաղկապված լինեն շրջանում վարակիչ հիվանդությունների դեմ տարվող անասնաբուժական միջոցառումների հետ.

գ) մայրական կազմի և հովատակների զոոանասնաբուժական զննման տվյալների հիման վրա շրջհողբաժինը պետք է զուգավորման կամպանիան անցկացնելու պլան սահմանի ըստ յուրաքանչյուր կոլտնտեսության և խորհրդային տնտեսության, իսկ մենատնտեսների գծով՝ ըստ յուրաքանչյուր գյուղխորհրդի.

դ) ձիերի զուգավորման կամպանիան անցկացնելու պլան պետք է քննարկվի տնտեսությունների արտադրական խորհրդակցություններում և հասցվի յուրաքանչյուր բրիգադին ու կոլտնտեսականին, ինչպես նաև մենատնտեսությանը.

ե) միջակից ցածր գերություն ունեցող բոլոր մայր ձիերը պետք է ուժեղացրած կերակրման դրվեն և մինչև ձիերի զուգավորման կամպանիան սկսվելը հասցվեն միջակ ու լավ գերության։ Հիվանդ մայրերը պետք է բուժման դրվեն.

զ) զուգավորման կամպանիան սկսվելուց մեկ և կես ամիս առաջ արտադրող հովատակները պետք է դրվեն լավացրած կերակրման և մինչև զուգավորումն սկսվելը հասցվեն լավ գերացած դրության։ Մինչ զուգավորման կամպանիայի սկիզբը պետք է կատարվի նաև բոլոր հովատակների սերմի հետազոտում։

Հետագայում, զուգավորումն անցկացնելիս, սերմը պետք է կանոնավորապես ստուգվի վոչ պակաս քան ամիսը մեկ անգամ.

է) հովատակների համար պետք է առանձնացվի և անձեռնմխելի դարձվի անհրաժեշտ քանակի խտացրած և կոպիտ կեր՝ զուգավորման ամբողջ ժամանակաշրջանի համար.

ը) հովատակների համար պետք է համապատասխան շենք նախապատրաստված լինի.

թ) կարճատև դասընթացներում պետք է պատրաստված լինեն զուգավորման կայանների վարիչներ։

ՀԱՄԱՐ
11-30252դ

3. Զուգավորման կայանը կազմակերպվում և աշխատում է կոլտնտեսության վարչության անմիջական ղեկավարության տակ։ Այն դեպքում, երբ զուգավորման կայանը բրիգադի աշխատանքի վայրից 10 և ավելի կիլոմետր հեռավորության վրա է գտնվում, բրիգադին կից կազմակերպվում է զուգավորման կայան և հատուկ արտադրող է առանձնացվում։

4. Յեթե այն բրիգադում, որին կցված է հովատակը, մայրական կազմի թիվը բավարար չէ հովատակին լրիվ ծանրաբեռնելու համար, այդ դեպքում հովատակին մի քանի բրիգադների զամբիկներ են կցվում։

5. Ձիերի զուգավորման կամպանիայի պլանը բարձր վորակով յեվ իր ժամանակին կատարելու համար պատասխանատվություն են կրում՝

ա) կոլտնտեսության նախագահը՝ կոլտնտեսության պլանն իր ամբողջությամբ կատարելու համար.

բ) ՁԱՖ-ի վարիչը՝ ՁԱՖ-ի մայրական կազմի և արտադրողների նախապատրաստման ու զուգավորման կամպանիայի անցկացումը կազմակերպելու համար.

գ) զուգավորման կայանի վարիչը պլանը կատարելու համար, հովատակների դրության համար, զամբիկների տեխնիկապես ճիշտ ծածկման, հաշվետության և զուգավորման մատյանները ճիշտ վարելու համար.

դ) բրիգադավարը՝ բրիգադի պլանն իր ամբողջությամբ կատարելու և զամբիկին զուգավորման կայան տանելու նպատակով իր ժամանակին աշխատանքից ազատելու համար.

ե) ձիապահը՝ զուգավորման կայանին կցված զամբիկների սեռական ցանկությունն իր ժամանակին հայտարերելու, զամբիկները կայան բերելու և ծածկելու համար, մինչև նրանց հովատակից լրիվ հրաժարվելը.

զ) ձիավար — կոլտնտեսականը զամբիկի սեռական ցանկությունն իր ժամանակին հայտնաբերելու և զուգավորման կայան բերելու համար։

6. Զուգավորման ժամանակաշրջանի սկիզբը և վերջը սահմանվում է որիենտիր կերպով մարտի մեկից մինչև հուլիսի 15-ը։ Նայած առանձին յերկրամասի, մարզի կլիմայական պայմաններին՝ այդ ժամկետները կարող են փոքր ինչ փոփոխման յենթարկվել։

II. Զուգավորման կայանի աշխատանքի կազմակերպումը

7. 20 և ավելի զամբիկ ունեցող յուրաքանչյուր կոլտնտեսություն, յեթե նրան պատկանող մայրական կազմը չի կցված արհեստական սերմնավորման կայանին, պետք է կազմակերպի իր զուգավորման կայանը, այդ գործին հատկացնելով այնքան հովատակներ, վորոնք կարողանան ապահովել սերունդ տալու համար պիտանի բոլոր զամբիկների ծածկումը։

8. Զուգավորման կայան նշանակված հովատակները սորտային և ցեղային տեսակետից պետք է համապատասխանեն զուգավորման կայանին կցված մայրական կազմի վորակական և ցեղական կազմին և իրենց վորակով (եկստերյերով և արյունակցության աստիճանով) մայրական կազմից բարձր լինեն։

9. Հովատակին զուգավորման կայան նշանակելիս՝ պետք է առանձնակի ուշադրություն դարձնել այն բանի վրա, վորպեսզի հովատակը չունենա ժառանգաբար փոխանցվող արատներ (շչահեղձում, վերջավորությունների արատներ, կուբրա, ժարկա, շպատ)։

Նշված արատներն ունեցող վոչ տոհմային հովատակները զուգավորման չեն թույլատրվում։

Այդ արատներն ունեցող և անցյալ տարիները զուգավորման կայաններում ոգտագործվող տոհմային հովատակները կարող են մացվեն զուգավորման ցանցի մեջ, յեթե դրանց սերնդի վորակի ստուգումը զոոանասնաբուժական աշխատողների կողմից ցույց տա, վոր այդ արատները տվյալ հովատակի կողմից ժառանգաբար չեն փոխանցվում։

Յեթե տնտեսության մեջ կա յերիտասարդ տոհմային հովատակ, (առաջներում զուգավորման համար չոգտագործված, վորն ունի վերոհիշյալ արատները, բայց արժեքավոր է իր ծագումով, եկստերյերով և չափումներով, ապա տոհմային հովատակների պակասության դեպքում, զոոանասնաբուժական հանձնաժողովը կարող է թույլատրել դրան զուգավորման՝ սահմանափակ ոգտագործումով, վոչ ավելի քան 8-10 վոչ-տոհմային զամբիկ ծածկելու։ Նայած այդ հովատակից ստացված սերնդի վորակին, հետագայում պետք է լուծվի դրա հետագա ոգտագործման հարցը վերարտադրման համար։

10. Հովատակներին կցվող զամբիկների ընտրության ժամանակ անհրաժեշտ է ղեկավարվել հետևյալ կանոններով.

ա) չզուգավորել միատեսակ եկստերյերային թերություններ ունեցող հովատակին և զամբիկին— որինակ՝ կախ ընկած մեջք ունեցողներին (վոչ ծերությունից).

բ) վորոշակի արյունակցություն ունեցող զամբիկներին չզուգավորել վոչ-ցեղային կամ թե ավելի ցածր արյունակցության աստիճանի հովատակների հետ (որինակ՝ $^3/_4$ արյունակցության զամբիկը չի կարելի ծածկել կիսարյուն հովատակով, կամ թե կիսարյուն զամբիկը՝ վոչ-ցեղային հովատակով և այլն).

գ) լավագույն զամբիկներին զուգավորել լավագույն հովատակների հետ՝ կայունացնելով սերնդի մեջ նրանց ոգտակար հատկանիշները։

11. Շրջհողբաժնի զոոտեխնիկական անձնակազմը պարտավոր է տոհմային գրքերում գրանցված զամբիկների համար հովատակների անհատական ընտրություն կատարել։

III. Շեհիբը յեվ հովատակի պահպանումը զուգավորման կայաններում

12. Զուգավորման կայանում հովատակին հատկացրած տխոռը պետք է լավ պաշտպանված լինի անձրևից և միջանցուկ քամուց, լինի չոր, բավարար լուսավորող տարածությամբ (հատակի տարածության 1/12-ից վոչ պակաս), հնարավորին չափ մեկուսացած լինի ձիերից և այլ անասուններից։

13. Հովատակներին պետք է պահել դեննիկներում և վոչ մի դեպքում կապած դրությամբ։ Դեննիկի չափը պետք է լինի վոչ պակաս 3,2×3,2 մետրից. բարձրությունը 3,5 մետր։

Դեննիկներում անհրաժեշտ է այնպիսի դուռ շինել, վորպեսզի հովատակը կարողանա ազատ կերպով անցնել, չկռացնելով գլուխը (մոտավոր չափը 1,2×2,8 մետր է)։

Դեննիկների հատակը պետք է լինի կավակերտ, լավ տոփանած առանց խորդ ու բորդությունների և փոսերի։

14. Հովատակներին հատկացված շենքը պետք է մաքուր պահվի յեվ ամեն որ ոդափոխվի։ Գոմաղբը և թաց ցամքարն ամեն որ պետք է դուրս տարվի։

Դեննիկներում և միջանցքներում բացի մսուրներից այլ իրեր — ճաղեր, մաղեր, տաշտեր և այլն չպետք է լինեն։

Ցանկալի յե դեննիկներում կախովի մսուրներ ունենալ։

15. Զուգավորման կայաններում հովատակներին պետք է անհատորեն կերակրել հետևյալ որական որինակելի կերային նորմաներով (կիլոգրամներով).

Կերերի անունը	Հեծնելու, վարդուն և մանր ծանրաքաշ ձիերի համար	Խոշոր ծանրաքաշ ձիերի համար
Խտացրած կերեր (վարսակ, գարի յեգիպտացորեն, թեփ)	5—7	6—9
Չոր խոտ	6—8	8—10

16. Արտադրող հովատակների կերը պետք է լինի լավ վորակի վարսակը՝ չոր, առանց վատ հոտի, մաքուր, խոտը՝ առանց բորբոսի, իր ժամանակին լավ հնձված ու հավաքած, ցամքարի համար առավելապես պետք է ծղոտ գործածել, թույլատրելով դրա փոխարինումը տորֆով կամ փայտի թեփով։

17. Ամեն որ սահմանված ժամին հովատակին պետք է մաքրել ծղոտի փնջով և խոզանակով, իսկ սմբակները լվանալ ջրով և սրբել մինչև ցամաքելը։

18. Հովատակները կամ ամեն որ պետք է ցանկապատած արոտներում (левада) զրոսանքի դուրս բերել կամ հեծած և կամ սայլակառքում լծած, 40-50 բոպե տեվողությամբ դանդաղ քշել մինչև թեթև քրտնելը։

19. Հովատակների հետ անհրաժեշտ և ուշադիր վարվել, չի թույլատրվում հովատակին հարվածել, հրել և այլն։ Զուգավորման կամպանիայի ամբողջ ժամանակաշրջանում պետք է հովատակի 4 վոտքերից ել պայտերը հանված լինեն։

20. Ամսական վոչ պակաս քան մեկ անգամ անհրաժեշտ է մաքրել հովատակների սմբակները, մաքրումը պետք է կատարվի ձեռքերի վրա հովատակին առանց դաղդյահ մացնելու։

21. Զուգավորման յուրաքանչյուր կայանում պետք է սահմանված լինի որվա կայուն կարգ, վորպես որիենտիր կարելի յե ղեկավարվել հետեվյալով՝

Ժամերը	Աշխատանքի օբյեկտները
5—6	Զրելը, խոտով և վարսակով առաջին կերակրելը, դեննիկների մաքրելը։
6—7	Հովատակի մաքրելը զրոսանքից առաջ, հովատակին զրոսանքի տանելը։
7,5—8,5	Զուգավորումը։ Զուգավորելուց հետո հովատակին զրոսանքի տանելը։ Խոտ տալը։
10—11,5	Հովատակների և ախոռների մաքրումը։
11,5—12	Զրելը։ Թեփ, վարսակ և խոտ տալը։
17—18	Զամբիկների զուգավորումը այն հովատակների հետ, վորոնց թույլատրված է յերկրորդ անգամ ծածկելու, ինչպես նաև յեթե առավոտյան զուգավորում չի կատարվել։ Զուգավորելուց հետո հովատակներին զրոսանքի տանելը։
18—18,5	Հովատակների և ախոռի մաքրումը։
18,5—19	Զրելը, վարսակ և խոտ տալը։
24	Խոտ տալը գիշերապահի կողմից։

Զուգավորման կայանի որվա կարգը պետք է քննարկվի կոլտնտեսության վարչության կողմից և հաստատվի կոլտնտեսականների ժողովում։

IV. Հովատակների օգտագործումը զուգավորման համար

22. Յուրաքանչյուր առողջ, նորմալ վիճակում գտնվող և հասակն առած (4 տարեկան և բարձր) տոհմային հովատակ, խնամքի և պահպանման համապատասխան կանոններ պահպանելիս կարող է բնական ձեռնաքաշ զուգավորման ժամանակ ծածկել վոչ պակաս 50 զամբիկից, տալով զուգավորման սեզոնում վոչ ավել քան 175 ծածկում։

Առաջին անգամ զուգավորվող 3 տարեկան հասակի հովատակների համար սահմանվում է 15—30 մայր ծածկելու բեռնվածություն, սեզոնի ընթացքում 75 ծածկումից վոչ ավել։

Ծեր հովատակների բեռնվածության նորմաները, նայած նրանց առողջական վիճակին և անհատական առանձնահատկություններին, կարելի յե իջեցնել մինչև 20—30 զամբիկի։

23. Ձեռնաքաշ զուգավորման ժամանակ միանգամայն առողջ արտադրողին կարելի յե որական թույլատրել 2 ծածկում, ծածկումների մեջ, ընդմիջում տալով վոչ պակաս քան 8—10 ժամ։

Յերիտասարդ— 3 տարեկան հասակի, առաջին անգամ զուգավորվող հովատակների համար սահմանվում է որական 1 ծածկում։

24. Խմբային զուգավորման ժամանակ մեծահասակ հովատակների համար սահմանվում է 25 զամբիկի բեռնվածություն, իսկ յերիտասարդ և ծեր հովատակների համար 12—15 զամբիկ։

25. Արհեստական սերմնավորման ժամանակ հովատակի բեռնվածությունը պետք է լինի 150 զամբիկից վոչ պակաս։

26. Կոլտնտեսություններին պատկանող յուրաքանչյուր հովատակի բեռնվածությունը սահմանում է՝ զուգավորման կամպանիայի նախապատրաստական աշխատանքներն անցկացնող զոոտեխնիկական հանձնաժողովը, իսկ Պետ-ձիաբուծական ախոռի

հովատակների բեռնվածությունը՝ ախոռի ադմինիստրացիան և անասնաբուժական անձնակազմը։ Սահմանված բեռնվածությունն արձանագրվում է վերև նշված հանձնաժողովների ակտերով։

V. Փորձումն ու զուգավորումը

27. Զամբիկների սեռական ցանկությունը վորոշելու համար ձեռնաքաշ զուգավորման ժամանակ կատարվում է դրանց փորձում։ Փորձող հովատակով, վորը կոլտնտեսության կողմից առանձնացվում է բանող ձիերի կազմից։

Փորձաձին առանձնացնելիս պետք է առանձնակի լուրջ ուշադրություն դարձնել այն բանի վրա, վորպեսզի նա զերծ լինի վարակիչ հիվանդություններից։

28. Զամբիկների փորձումը կատարվում է հետևյալ եղանակներով՝

ա) ձեռքից — յերբ յերկու ձիապաններ պայտահանած փորձաձիու յերասանակներից բռնած մոտեցնում են հետևի վոտքերը պայտահանած զամբիկներին կամ՝ բ) փակոցի վրայով, յերբ փորձաձին կանգնեցնում են յերկու սյունների արանքում ողակներով ամրացած և խսիրով փաթաթած (1 մետր բարձրության և 2 և կես մետր յերկարության) փակոցի մի կողմում, իսկ մյուս կողմից մոտեցնում են զամբիկին։ Յերկու դեպքերում էլ փորձաձիուն սկզբում թույլ են տալիս հոտոտելու զամբիկին գլխից, իսկ հետո, յեթե զամբիկը մոտ է թողնում, ստիպողական մոտեցնում են աճուկին և հետույքին։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ — Փորձաձիերը զուգավորման ամբողջ ժամանակաշրջանում պետք է պայտահանված լինեն։

29. Փորձումն ու զուգավորումը պետք է կազմակերպել այնպես, վոր զամբիկները չկարվեն գյուղատնտեսական աշխատանքներից։ Ամեն որ առավոտյան մինչ աշխատանքներն սկսվելը, յերեկոյան աշխատանքներից հետո և ճաշվա ընդմիջումին զուգավորման կայանի վարիչը կամ ձիապահը փորձաձին հեծած շրջում է այն բրիգադները, վորտեղ կան զուգավորման համար նախատեսված զամբիկներ և կատարում նրանց փորձումը։ Զուգավորման կայան չունեցող, բայց այս կամ այն զուգավորման կայանին կցված կոլտնտեսություններում զամբիկների փորձումը անց է կացվում հատուկ առանձնացրած ձիապահի կողմից։

Մենատնտեսներն իրենց զամբիկներին փորձելու համար պետք է զուգավորման կայան բերեն։

30. Ձիապահներն ու հեծվորները պարտավոր են հսկել զամբիկների բերի գալու (սեռական ցանկություն) յերևալուն, վոր իմացվում է հետևյալ նշաններով։

Բերի յեկող զամբիկները դառնում են անհանգիստ, նրանց հեշտոցի լորձաթաղանթն ուռչում է, հաճախակի միզում են, բարձրացնում են պոչը, հետ են նայում ձիերի վրա և այլն։

Փորձելու ժամանակ զամբիկը թարթում է մերքը, այնտեղից դեղնավուն պղտոր լորձունք է բաց թողնում և հանգիստ կանգնում, արտահայտելով զուգավորման լրիվ ցանկություն։

Յեթե փորձելու ժամանակ զամբիկը ցույց տված նշանները չի հայտարերում, անհանգիստ է կանգնում, պտտում է պոչը, չարանում, աքացի տալիս, ապա այդ նշան է, վոր զուգավորման ցանկություն չունի։

31. Ձնած զամբիկներին անհրաժեշտ է զուգավորման կամպանիայի սկզբից ամեն որ փորձել։ Ծնած զամբիկների փորձումը սկսում են ծնելուց հինգ որ հետո և շարունակում ամեն որ մինչև ցանկության գալը։

Զամբիկներին ծածկում են զուգավորման լրիվ ցանկություն հայտնաբերելիս։

Հերթ դրված զամբիկները փորձվում և զուգավորվում են առաջին հերթին։

32. Սեռական ցանկության յեկած զամբիկները զուգավորման կայանում ծածկվում են յերկրորդ որը, առաջին որը հաշվելով — սեռական ցանկություն հայտաբերելու որը։ Այնուհետև փորձվում են 4-րդ, 6-րդ, 8-րդ և 10-րդ որը հաշվելով ցանկություն հայտաբերելու որից և ցանկության դեպքում ծածկվում են նույն այդ որերում։ Ինտենսիվ ցանկություն հայտաբերելու դեպքում ծածկումը կարող է կրկնվել 24-26 ժամ հետո։ Նշված որերից վորևե մեկ որում հովատակից հրաժարված զամբիկներին շարունակում են փորձել ամեն որ կամ թե որ ու մեջ — մինչև զուգավորման կամպանիայի վերջը, կամ թե հղիության փաստի սահմանելը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ — 10-րդ որը ծածկված զամբիկները 12-րդ որում էլ ցանկություն հայտաբերելու դեպքում նրանց այլևս չեն ծածկում, այլ ուղարկում են անասնաբուժական զննման և հետագայում զուգավորում անասնաբուժական անձնակազմի ցուցմունքներով։ Որինակ՝ յեթե զամբիկը բերի յե յեկել ապրիլի 3-ին, նրան ծածկում են ապրիլի 4-ին, յերկրորդ փորձումը

կատարում են ապրիլի 6-ին և բերի գալու դեպքում զուգավորում են հենց նույն օրը։ Յերրորդ փորձումը կատարում են ապրիլի 8-ին, չորրորդը՝ ապրիլի 10-ին։

33. Յեթե փորձման և զուգավորման մատյանի գրանցումներից կարելի լինի պարզել ցանկության տևողությունը, այդ դեպքում չբեղմնավորված յերկարատև բերի շրջան (9-12 օր) ունեցող զամբիկներին ծածկում են ցանկության 4-րդ օրից, իսկ ծծմայր զամբիկներին, վորոնք ունեն նույնպես տևողական ցանկություն սկսում են զուգավորել 3-րդ օրից։

34. Յեթե մի օրում ցանկության են գալիս մեկ հովատակի համար ընտրված մի քանի զամբիկ, այդ դեպքում առաջին հերթին ծածկում են ծնած (ծծմայր), ցանկության առաջին շրջանում գտնվող զամբիկներին։

35. Զեռնաքաշ զուգավորումն անցկացնելու համար պետք է հատկացնել միանգամայն մեկուսացված մի հարթ տեղ, վորն ազատ լինի կեղտից, գոմաղբից, քարերից, ապակուց և այլն։

Լավ յեղանակին զուգավորումը կարելի յե կատարել բացոթյա, իսկ վատ, ցուրտ յեղանակին՝ լավ պաշտպանված և ծածկած բակում։

36. Զուգավորման ժամանակ պետք է լրիվ հանգստություն (լռություն) պահպանել, վորպեսզի խոսակցությամբ և աղմուկով չվախեցնեն հովատակին և չշեղել նրա ուշադրությունը։ Կողմնակի անձնավորությունների ներկայությունը զուգավորման ժամանակ չի թույլատրվում։

37. Յեթե զամբիկն իր հասակով հովատակից բարձր կամ ցածր լինի, այդ դեպքում անհրաժեշտ է զուգավորելու համար զամբիկի հասակը հավասարեցնել հովատակի հասակին, զամբիկին ավելի ցածր կամ բարձր տեղ կանգնեցնելով։

38. Զուգավորման ժամանակ զամբիկների հետևի վոտքերը անպայման պետք է պայտահանված լինեն։

Հովատակին զամբիկի հարվածներից պաշտպանվելու նպատակով վերջինին զուգավորումից առաջ անհրաժեշտ է զուգավորման շրջափակ հագցնել։

Հովատակի առնանդամը մաղով վիրավորելուց խուսափելու համար, զուգավորումից առաջ պետք է զամբիկի պոչը մինչև կեսը փաթաթել բինտով և ծածկման ժամանակ մի կողմ քաշել։

Յեթե նկատվի, վոր զուգավորման ժամանակ հովատակը կբծում է զամբիկին, այդ դեպքում պետք է զամբիկների վիզը և մեղավը — պաշտպանել ծածկոցով։

39. Զուգավորման համար պատրաստած զամբիկին ծածկումից առաջ պետք է կանգնեցնել զուգավորման հատկացրած տեղը։ Հովատակին յերկու յերկար յերասանակներից բռնած դրությամբ մոտեցնում են զամբիկին և յերբ նա պատրաստ է լինում (առաջ է գալիս առնանդամի լրիվ դոգռում) բաց են թողնում զամբիկի վրա։

Ծածկման ժամանակ անհրաժեշտ է զամբիկի գլուխը վեր բարձրացնել, վորպեսզի դժվարացվի հովատակին հարվածելու հնարավորությունը, հովատակի կողմից ուժեղ ճնշման դեպքում, անհրաժեշտ է զամբիկին ուսով պահել կրծքի տակից։

Չպետք է թույլ տալ, վոր հովատակը նետվի և բարձրանա զամբիկի վրա կողքից։ Պետք է թողնել, վորպեսզի հովատակը առաջ հոտոտի զամբիկի գլուխը, կողքերը, աճուկը և այն ժամանակ միայն թույլ տալ բարձրանալու։

40. Զեռնաքաշ զուգավորման ժամանակ հովատակի առնանդամը ձեռքով է ուղղվում։ Ձիապահի ձեռքերը միշտ մաքուր պետք է լինեն, յեղունգները կտրած։ Յերբ հովատակը կբարձրանա զամբիկի վրա՝ յերասանակները պետք է թուլացնել և զամբիկին ազատություն տալ, պահելով նրան, վորպեսզի նա հանդիստ կանգնի հովատակի տակ։

41. Հովատակը պետք է զամբիկի վրա մնա մինչև սերմի լրիվ արտադրվելը, վորն իմացվում է նրա պոչի թեթև շարժումով վերից վար, և մինչև վոր առնանդամը հեշտոցից դուրս ընկնի։

Ծածկումից հետո հովատակի առնանդամը զգուշորեն լվանում են մաքուր գոլ ջրով (20-25 աստիճանի)։

42. Յեթե վորևե պատճառով ծածկումը չհաջողվեց, անհրաժեշտ է այդ դեպքում հովատակին 15-20 րոպե ման ածել և դրանից հետո կրկնել զուգավորումը։ Զուգավորելուց հետո հովատակին չպետք է անմիջապես շենք տանել, այլ պետք է մոտ 20 րոպե ման ածել, ըստ վորում ախոռ տանելուց հետո լավ չորացնել, սրբել ծղոտով, տրորել գավակը, գոտկատեղը, վոտքերը և հետո միայն դեննիկ թողնել։ Ցուրտ յեղանակին հովատակին ման ածելիս պետք է ծածկոցով ծածկել։

43. Ծծմայր զամբիկներին փորձելու և զուգավորելու ժամանակ, անհրաժեշտ է մտրուկին զամբիկի մոտ պահել և նրան ազատել միայն հովատակին տանելուց հետո։

44. Ագալային զուգավորման ժամանակ զամբիկների փոր-

ձումը կարող է և չկատարվել։ Աղալային զուգավորման համար նախատեսված բոլոր զամբիկներին առավոտյան քշում են բաղը (աղալը) և դրանից հետո բաց են թողնում այն հովատակին, որը նախատեսված է այդ զամբիկներին ծածկելու համար։ Արտադրողը ինքն է գտնում տվյալ մոմենտում ցանկություն ունեցող զամբիկներին և ծածկում է նրանց ըստ իր ընտրության։ Աղալային զուգավորման համար նշանակված հովատակին նույն զամբիկի կամ տարբեր զամբիկների վրա կարելի է որական միայն երկու ծածկում թույլատրել։

Զուգավորումը վերջացնելուց հետո հովատակին ախոռ են տանում, իսկ զամբիկներին քշում են արոտ։

Աղալում հովատակներին հեշտ բռնելու համար, նրան աղալ են բաց թողնում լավ հարմարեցրած պախուցով, բայց առանց յերասանակի։

45. Զուգավորման ժամանակ հովատակը՝ նրան հատկացրած խմբում զամբիկներին ծածկում է ինքնուրույն կերպով, առանց կողմնակի ոգնության։

Վորպես կանոն մինչև զուգավորման կամպանիայի վերջը զամբիկներին խմբերից չեն վերցնում, բացառությամբ հիվանդության դեպքերից։

Խմբի մեջ նոր զամբիկներ ավելացնելը կարելի է միայն մեծ անհրաժեշտության ժամանակ։Այդ դեպքում լավ է հովատակին վերցնել աղալ և պահել դրան խմբի մեջ նշանակված նոր զամբիկի հետ։

Յերբ նրանք իրար ընտելանում են բաց են թողնում խմբի մեջ։

46. Մինչև զուգավորման սեզոնի վերջը, խմբից հովատակ, ինչպես և զամբիկներ վերցնել կարելի է միայն բացառիկ դեպքերում (հիվանդություն և այլն)։

Հովատակին պետք է սովորեցնել արոտում լրացուցիչ կեր ուտել տոպրակից, իսկ որվա շոգ ժամանակ՝ ախոռում։ Վերջին յեղանակը հանձնարարվում է միայն այն հովատակների համար, որոնք խմբից առանձնացվելիս չեն անհանգստանում։

47. Խմբային զուգավորման մեջ առաջներում աշխատող հովատակին խումբ են բաց թողնում հետեվյալ կերպ։

Տվյալ հովատակի համար նախատեսված զամբիկներին հավաքում են մի բաց տեղ և նրանց մոտ բաց են թողնում արտադրողին, սպասելով այն ժամանակին, յերբ զամբիկները, առանձնապես փոքր մտրուկ ունեցող ծծմայրները հանգստանան, խումբը յերամակավարի հսկողության տակ քշվում է նրա համար նախատեսված արոտավայրը։

48. Զուգավորման մեջ չեղած ջահել հովատակին խումբ են բաց թողնում հետեվյալ կերպ։ հովատակին կցված մայրերին քշում են աղալը, նրանցից ընտրում են մի զամբիկ, որը տվյալ մոմենտին բացահայտ սեռական ցանկության մեջ է և ձեռնաքաշ յեղանակով ծածկում են։ Այդ ժամանակ ցանկալի է խուսափել արտադրողին որևե ոգնություն ցույց տալուց (պահելը, առնանդամի ուղղելը և այլն)։ Յերբ հովատակը միանգամայն կընտելանա խմբակին և կկարողանա ինքնուրույն կատարել ելի մի ծածկում, խումբը կարելի է յերամակավարի հսկողության տակ արոտ քշել։

49. Խմբակի զուգավորման մեջ չեղած, բայց ձեռնաքաշ զուգավորման մեջ արդեն ոգտագործված հովատակին խումբ են բաց թողնում այնպես, ինչպես և ջահել հովատակին։

Տարբերությունն այն է, որ չափից դուրս տաքարյուն խառնվածքի հովատակի առաջին ծածկումից որոշ ժամանակ անց (աղալում, որտեղ քշված են նրան կցված բոլոր զամբիկները) չհեռացնելով նրանց, կրկնում են ծածկումը նույն զամբիկի վրա, որից հետո խումբը արոտ են քշում։

VI. Անասնաբուժական—սանիտարական վերահսկողությունը

50. Յուրաքանչյուր զուգավորման կայան պետք է անասնաբուժական անձնակազմի (անասնաբուժի, անասնաբուժակի) մշտական հսկողության տակ գտնվի։

51. Զուգավորման կամպանիայի սկզբին բոլոր կոլտնտեսությունները պետք է անասնաբուժական աշխատողներ հրավիրեն՝ զուգավորման համար նշանակված զամբիկներին և հովատակներին զննելու համար։

Անհրաժեշտ է առաձնակի ուշադրություն դարձնել զուգավորման հիվանդության (подседал) և վարակիչ վիժման վրա։ Անասնաբուժական սանիտարական զննման են յենթարկվում նաև զուգավորման կայանին կցված մենատնտեսների զամբիկները։ Զամբիկները պետք է զուգավորման կայան բերվեն անասնաբուժական զննման և տնտեսության՝ ձիերը վարակիչ հիվանդություններից զերծ լինելու տեղեկանքներով։

52. Զուգավորման թույլատրվում են միայն առողջ հովատակներն ու զամբիկները։ Զուգավորման չեն թույլատրվում խիստ հոգնածության սուր նշաններ ունեցող զամբիկները։

Ինչպես հովատակները, այնպես և զամբիկները յուրաքանչյուր զուգավորումից առաջ պետք է զննվեն անասնաբուժի կամ անասնաբուժակի, իսկ դրանց բացակայության դեպքում զուգավորման կայանի վարիչի կամ սանիտարի կողմից։

53. Եթե հովատակն առնանդամի վրա պզուկներ, խոցեր, կամ թե ձվապարկի վրա ուռուցք ունենա, այդ դեպքում, առանց անասնաբուժական անձնակազմի թույլատրության, նա զուգավորման չի թույլատրվում։

54. Հիվանդագին դրության նշաններ ունեցող զամբիկները (մարմնի նիհարություն, ցցված բուրդ, ներս ընկած թարախակալող աչքեր, ընդհանուր դալկություն, կրծի ուռուցք և քարացում, արտաքին սեռական որդանների ուռուցք և այտուց, պզուկներ և խոցեր արտաքին սեռական որդանների թե դրսից և թե ներսից, թարախահոսում, կեղտոտ լորձունքի հոսում և արնաջրի հոսում, հետույքի թուլություն, մարմնի վորևե մասի անդամալուծություն, փորի և կրծի վրայի այտուց, արտահոսում քթածակերից, ուռուցք ծնոտի տակ, վոտքերի այտուց կամ ուռուցք, քոս, մարմնի վրա ողակներ և մերկ բծեր) առանց անասնաբուժական անձնակազմի թույլատրության չեն թողնվում վոչ փորձվելու և վոչ էլ զուգավորվելու։

55. Զուգավորման կայանի մոտերքում արտադրողների և ճնացած կենդանիների համար վտանգավոր վորևե վարակիչ հիվանդություն հայտաբերելիս զուգավորման կայանի աշխատանքն անմիջապես դադարեցվում է և կարող է կրկին վերսկսվել միայն անասնաբուժի թույլտվությամբ։

56. Արտադրող հովատակները հիվանդանալիս՝ զուգավորման կայանի վարիչը պետք է այդ առթիվ անմիջապես հայտնի կոլտնտեսության վարչությանը, իսկ պետական բուծարանային տիպի հովատակների մասին՝ նաև Պետ-բուծարանային տիպի կառավարչին։

VII. Հաշվառման և հաշվեկշռության մասին

57. Զուգավորման կայանի վարիչը վարում է զամբիկների զուգավորումների մատյանը, վորտեղ տեղեկություններ են գրանցվում զուգավորման կայանում ծածկվող բոլոր զամբիկների մասին։

Զուգավորման մատյանը պետք է տարվի հատուկ մանրակրկիտությամբ, վորովհետև դա հանդիսանում է այն հիմնական փաստաթուղթը, վորի միջոցով սահմանվում է սերնդի ծագումը։

Յուրաքանչյուր հովատակի համար զուգավորումների առանձին մատյան է տարվում։ Զուգավորումների մատյանում մտցվում են ծածկման և հրաժարման ամսաթիվը, իսկ փորձման ժամկետները ճիշտ պահպանելու համար սեվագրության տեսք է պահվում։

58. Այն դեպքում, յերբ զուգավորման կայանում այլ կոլտնտեսություններին և մենատնտեսներին պատկանող զամբիկներ են ծածկում, նրանց ծածկումների գրանցումը կատարվում է այն հովատակի մատյանում, վորով նրանք ծածկվել են և միայն հրաժարվելուց հետո՝ կոլտնտեսությանը, կոլտնտեսականներին կամ մենատնտեսներին զուգավորման վկայական է տրվում։

59. Յուրաքանչյուր տասնորյակ, սահմանված ժամկետներին, զուգավորման կայանի վարիչը պարտավոր է շրջհողբաժնին տեղեկություն ներկայացնել զուգավորման կայանում ծածկված մայր կենդանիների թվի մասին։

60. Զուգավորման կայանի վարիչը յուրաքանչյուր հովատակի ծածկած զամբիկների ծննդաբերության հաշվառքն առանձին է տանում և ծննդաբերության վերաբերյալ տեղեկություններն ուղարկում է հողբաժին։

11-30025890



Ռուսերենից թարգմանեց՝ Ս. Թադեվոսյան
Մասնագիտական խմբագիր՝ Ավ. Այլավերդյան
Տեխ. խմբագիր՝ Լ. Ոհանյան
Սրբագրիչ՝ Հ. Մանուկյան

Գլավլիտի լիազոր՝ Ա—4008. Հրատ. № 4650
Պատվեր 499· Տիրաժ 1500
Թուղթ 62×94. Տպագր 1 մամ.
Մեկ մամ. 38400 նշան. Հեղինակ. 0,99 մամ·
Հանձնված և արտադրության 25 մայիսի 1938 թ·
Ստորագրված և տպագրության համար 14 հուլիսի 1938 թ.

Պետհրատի I տպարան, Երևան, Լենինի 65

ՀՀ Ազգային գրադարան
NL0999886

22 OKT. 1938

498

30

II
30252